# ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

**«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-1145-04.09.2025-ԳԿ-011/0) վերաբերյալ**

Ազգային ժողովի պատգամավորներ Թագուհի Ղազարյանի և Սիսակ Գաբրիելյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Պ-1145-04.09.2025-ԳԿ-011/0) (այսուհետ՝ Նախագիծ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագիծը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

## Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագիծը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց նորմեր չի պարունակում:

## Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծով սահմանված կարգավորումներում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների պահանջների տեսանկյունից խնդրահարույց նորմեր առկա չեն:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Կատարող՝ Լ. Պետրոսյան (հեռ.՝ 011-513-248)
22.09.2025թ.

## ՏԵՂԵԿԱՆՔ

## Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Կատարող՝ Լ. Պետրոսյան (հեռ.՝ 011-513-248)
22.09.2025թ.

**Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները**

Ներկայացված նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվում է «Տեսալսողական մեդիայի մասին» 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ, որի համաձայն՝ հանրային հեռարձակողների թիվը չի կարող պակաս լինել երկուսից: Համաձայն Նախագծի հեղինակների, սրա արդյունքում կլինի բյուջետային միջոցների ավելի նպատակային և արդյունավետ օգտագործում, հանրային հեռարձակողների ֆինանսական կայունության ամրապնդում, հանրային հեռարձակողների մրցունակության աճ, ծրագրային բովանդակության որակի բարելավում, հստակ տարանջատված գործառույթներով երկու հանրային հեռարձակողների գործունեության ապահովում:

Նախագիծը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրներ չի պարունակում:

Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

***Եզրահանգում***

Նախագիծը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրների տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՐԹՈՒՐ ԹԱՍԱՉՅԱՆ
կատարող՝ առաջատար մասնագետ Ն. Առաքելյան
05.09.2025թ.

*Սոցիալական փորձաքննության արդյունքները*

Ներկայացված նախագծով (այսուհետ՝ Նախագիծ), առաջարկվում է փոփոխություն կատարել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում:

Ըստ Նախագծին կից ներկայացված հիմնավորման՝ ներկայիս գործող իրավակարգավորումների համաձայն, սահմանված պահանջներին բավարարող հանրային հեռարձակողների անհրաժեշտ թվի պահպանումը պատճառում է որակական խնդիրներ, մասնավորապես՝ ռեսուրսների դժվարին բաշխվածություն երեք հանրային հեռարձակողների միջև, կրկնվող բովանդակության առաջացում տարբեր հեռարձակողների ծրագրերում, կրթական-մշակութային ծրագրի համեմատաբար ցածր դիտարկվածություն և հասանելիություն, ինչպես նաև կառավարման ծանրություն և գործառնական անարդյունավետություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախագծով առաջարկվում է հանրային հեռարձակողների նվազագույն թիվը սահմանել երկու (նախկին երեքի փոխարեն), որը կապահովի բյուջետային միջոցների ավելի նպատակային և արդյունավետ օգտագործում, ծրագրային բովանդակության որակի բարելավում, հանրային մեդիաների դերի ամրապնդում տեղեկատվական տարածքում, կառուցվածքային օպտիմալացում և որոշումների ընդունման գործընթացի արագացում:

Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

*Եզրահանգում*

Նախագիծը սոցիալական հիմնախնդիրների տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ԼԻԼԻԹ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կատարող՝ Մ. Դալլաքյան (հեռ.՝ 011-513-235, 12-35)
19.09.2025թ.